ՍՈՎԵՏԱՀԱՅ ԱԿԱՆԱՎՈՐ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

(Հ. Շիրազի ծննդյան 50-ամյակի առթիվ)

Ս. Ա. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Հովհաննես Շիրազի ստեղծագործական աշխատանքը երեսունից ավելի տարիների պատմություն ունի։ Նրա բանաստեղծական առաջին փորձերը լուս են տեսել 1932 թ.։ Այնուհետև նրա գրվածքները պարբերաբար տպագրվել են մամուլում և առանձին գրքերով։ Այդ ժամանակամիջոցում նա ստեղծել է մեծ թվով բանաստեղծություններ ու պոեմներ։ Շիրազի անունը վաղուց դուրս է եկել մեր հանրապետության սահմաններից և տարածվել սովետական մեծ երկրով մեկ։ Նրա գրվածքները թարգմանվել են մի շարք լեզուներով, բազմազգ ընթերցողների սեփականություն են դարձել։ Շիրազը ամենից ավելի սիրված, ամենից ավելի ժողովրդականացած բանաստեղծներից է։ Նրան բոլորը գիտեն, նրա գրվածքները հուզում, գեղարվեստական մեծ հաճույք են պատճառում, կենդանի արձագանք են գտնում ընթերցողների ամենալայն զանգվածների մեջ։ Նրա ժողովածուներից յուրաքանչյուրը հարստացնում են ժամանակակից սովետական հայ բանաստեղծական արվեստը։



Շիրազը սովետահայ պոեզիայում ունի իր ուրույն տեղը, ինքնատիպ արվեստը, ոճը, բանաստեղծական լեզուն։ Իր գրական գործունեության ընթացքում նա մշակել է գեղարվեստական-ստեղծագործական որոշ սկզբունքներ, արտահայտչական որոշ եղանակներ, որոնք միայն իրենն են և որոնք, միասին վերցրած, որոշում են նրա բանաստեղծական դեմքը, նրա արվեստի յուրահատկությունը։

Հովհաննես Շիրազը պատկանում է արդի հայ բանաստեղծների միջին սերնդին։ Նրա երախայրիքը «Գարնանամուտ» ժողովածուն է (1936), որտեղ զետեղված է երեսնական թվականների սկզբին գրած ոտանավորների մեծ մասը։ Այս ժողովածուի գովելի կողմն այն է, որ երիտասարդ բանաստեղծը դիմում է արդի իրականության, շուրջը տեղի ունեցող հասարակական մեծ վերափոխություններն է դարձնում իր երգի նյութը։ Հին աշխարհից ազատագրված մարդու կուտակված եռանդն ու աշխատանքը, նոր կյանքի բարձրացումը հնի ավերակների վրա.—ահա այս ժողովածուի առաջատար մոտիվը։ Բանաս-

տեղծն իր շուրջն ամենուրեք խլրտացող կյանքի շունչն է զգում, ամենուրեք լսում է «քաղցր երգեր ու որոտ, կառուցվող օրվա կոիվ ու հանդես»։ Երգելով վերաշինվող քաղաքը, վեր հառնող սոցիալիստական հսկաները, նորակառույց էլեկտրակայանները, համայնական դաշտերի աշխատանքը, որոշելով իր տեղն ու դերը՝ բանաստեղծը դրանք իր սրտին շատ մոտ, հարազատ է համարում, իրեն դրանց հետ է զգում, դրանց մեջ։ «Այնտեղ է երդում իմ ջահել հոգին, այն հսկաների գարկով մոլեգին»,— ասում է բանաստեղծը։

Հայրենական աստերազմի նախաբրակին լույս տեսած «Երգ Հայաստանի» (1940) ծավալուն ժողովածուն հեղինակի մինչ այդ ստեղծածի հանրագումարն է։ Այդտեղ գետեղված է երևանական թվականներին նրա գրած քնարական երգերի մեծագույն մասը, այն բոլորը, ինչ հեղինակը համարել է հաջողված։ «Գարնանամուտ» և «Երգ Հայաստանի» ժողովածուներում հանդիպում են բանաստեղծական արվեստի փայլուն նմուշներ։ Սրիտասարդ բանաստեղծը զիմում է իրականության տարբեր բնագավառների, շոշափում բազմազան հարցեր՝ սոցիալական, խոհական, անհատական կյանք և այլն։ «Երգ Հայաստանի»-ում տեղ են գտել զգալի թվով ոտանավորներ, որոնցով հեղինակը արձագանքում է օրվա նշանակալից դեպքերին, քաղաքական կարևոր նյութ է շոշափում։ Գրքի մի ամբողջ բաժնի գործերը նվիրված են Լենինի հիշատակին, Հոկտեմբերյան հեղափոխությանը։ Առհասարակ Շիրազի պոետական խառնվածքին հատուկ է որոնման ջիղը։ «Գարնանամուտ»-ից մինչև «Երգ Հայաստանի»-ն ընկած շրջանում ստեղծված քնարական երկերի բնորոշ գծերից մեկն այն է, որ հեղինակը ձգտում է իր գրվածքները հարստացնել նշանակալից բովանդակությամբ։ Դրա շնորհիվ քանի գնում այնքան բազմազան են դառնում նրա բանաստեղծական շահագրգռությունները, ավելի ու ավելի ընդարձակվում են գեղարվեստական ընկալման շրջանակները։

Երևանական թվականները երիտասարդ բանաստեղծի համար սեփական թեմաների, ինքնուրույն մոտիվների, թարմ, ինքնատիպ ձևերի որոնման տարիներ էին. Շիրազի պոեզիայում կայուն տեղ են գրավում մի շարք պրոբլեմներ, որոնք հետագայում խորացվեցին ու դարձան նրա ստեղծագործության առաջատար գծերը։ Դրանք, նախ և առաջ, քաղաքական մոտիվներ են՝ հայրենիք, ժողովուրդ, հեղափոխություն և այլն, ապա գալիս են խոհական բանաստեղծությունները, սովետական բարոյականությանը, մորը, մանկությանը նվիրված բանաստեղծությունները և, վերջապես սիրո և բնության երգերը։ Երիտասարդ բանաստեղծն օրգանապես կապված է կյանքի հետ, ձգտում է գեղարվեստորեն յուրացնել հասարակական նշանակություն ունեցող երևույթներ։

Հովհաննես Շիրազի վաղ շրջանի մեծ կտավի գրվածքների մեջ հատուկ տեղ է գրավում «Սիամանթո և Խչեղարեն» պոեմը։ Դա սովետահայ պոեզիայի մնայուն գործերից է։ Հեղինակը հատուկ խնամքով է մշակել այդ պոեմը։ Բավական է նշել, որ վերջին՝ չորրորդ վերամշակված օրինակը լույս է տեսել առաջին հրատարակությունից քսաներկու տարի հետո՝ 1957 թ.։ Պոեմի նյութը վերցված է ժողովրդական բանահյուսությունից, բայց հեղինակը չի սահմանափակվել սոսկ ժողովրդական ավանդության վերարտադրությամբ, ազատ մոտեցում է ունեցել։ Վերցված պատրաստի նյութը դարձնելով պոեմի կմախքը՝ նրան կենդանի կյանք է տվել, շնչավորել, պոետական ջերմություն է հաղորդել, կրքեր, զգացմունքներ տվել, միևնույն դեպքերին ու կերպարներին նոր երանգներ է հաղորդել, նոր գծեր ու իմաստներ ավելացրել։ Դրա հետևանքով

«Միամանթո և Խջեզարե» պոեմը հնչում է իբրև ինքնուրույն գրվածք, սեփական պրոբլեմատիկայով, գաղափարական ուրույն բովանդակությամբ, սեփական, զուտ շիրազյան լեզվա-ոճական առանձնահատկություններով։

* *

Սովետական պոեզիայի կենսական հատկություններից մեկը սերտ կապն է ժողովրդի հետ, կյանքի հրատապ հարցերին ժամանակին արձագանքելը։ Այս գիծը առանձին ցայտունությամբ դրսևորվեց հայրենական պատերազմի ժամանակ։ Մարդկանց մտքերում ու գործերում տիրող «Ամեն ինչ ռազմաճակատի համար» նշանաբանը գրականության և արվեստի մարզում ևս հրամայական օրենք էր դարձել։ Երկրում ստեղծված լարված իրադրությունը նոր խնդիրներ թելադրեց գրականությանը։ Հայրենական պատերազմի տարիներին սովետական պոեզիայում առաջացան նոր մոտիվներ, նոր թեմաներ ու արտահայտչական եղանակներ։ Սովետահայ գրողները պատվով կատարեցին իրենց հայրենասիրական պարտքը գրչով ու սրով պաշտպանելով հայրենիքի ազատությունն ու պատիվը։ Առաջավորների շարքումն էր նաև Հովհաննես Շիրազը։ Չայնակցելով ավագ գրչակիցներին, նա արձագանքում էր օրվա այրող հարցերին, դրանք դարձնելով իր պոեզիայի առանցքը։

Շիրազի համար հայրենական պատերազմի շրջանը գաղափարական հասունության և գեղարվեստական կատարելության տարիներ էին։ Նրա պոեզիան հարստացավ նշանակալից նոր պրոբլեմներով, որոնք գեղարվեստական իմաստավորման ու խոր մեկնաբանություն են ստացել, անհամեմատ բարձրացավ նրա գրվածքների գեղարվեստական վարպետության մակարդակը, հուզական նուրբ պոռթկումները, ռեալիստական պլաստիկ գույներն ու գեղարվեստական վառ երևակայությունը նոր փայլ տվին նրա ոտանավորին։ Իսկապես ասած, Շիրազն առաջին անգամ հենց այդ տարիներին է ցույց տվել իր տաղանդի ուժը, բանաստեղծական ձիրքի հզորությունը։ Նա լայն ընդհանրացումներ է կատարում, այնպիսի մեծ մտքեր, խոհեր, տրամադրություններ է արտահայտում, որոնցում երևում է ժամանակի ոգին։ Նախորդ շրջանի գրվածքները նախապատրաստական փորձեր են թվում։ Ճիշտ է, նա չի հրաժարվել նախապատերազմյան շրջանի մոտիվներից, ընդհակառակը, դրանցից շատերն սկսել են աստիճանաբար արմատավորվել նրա պոեզիայում, բայց դրանք արմատապես վերաիմաստավորվել են, նոր մեկնաբանություն ու գեղարվեստական նոր տեսք են ստացել։

Հայրենական պատերազմի ժամանակ Շիրազի գրած ստեղծագործությունների մեծ մասը զետեղված է «Բանաստեղծի ձայնը» (1942), «Երգերի գիրք» (1942) և «Լիրիկա» (1946) ժողովածուներում։ Այդ ժողովածուների քնարական հերոսը հանդես է գալիս որպես լրջախոհ, իմաստնացած մարդկային ուժեղ բնավորություն, որն ապրում է մեծ զգացմունքներով, բարձր իդեալներով, մեծ թռիչքների մեջ է որոնում իր տարերքը։ Բանաստեղծը կարողանում է գտնել քնարական հերոսի հզորությունն ու զգացմունքների ուժը ցույց տվող առավել դիպուկ, բնութագրական պատկերներ։

Այդ շրջանի գրվածքները ցույց են տալիս, որ հեղինակի մտահոգության առարկան երկրի վրա ծանրացած վտանգն է։ Նա իր ձայնն է հնչեցնում թշնամու դեմ, ֆաշիզմը որակում է որպես «կյանքի թշնամի» և իր բանաստեղծու-

թյուններով կոչ անում՝ ոչնչացնել հակամարդկային մութ ուժերը։ Առաջին ժողովածուն՝ «Բանաստեղծի ձայնը», ամբողջապես այդ գաղափարին է նվիրված։ Նրա երգերի առարկան ռազմաճակատի մարդիկ են, կռվի գնացող զինվորները։ Այդ բոլոր գրվածքները համակված են հաղթանակի հավատով, նրանց մեջ իշխում է լավատեսական պայծառ ոգին. «Հավատում եմ, իմ հայրենիք, հա՛ղթ կմնաս»... Շիրազի քնարական հերոսը, խոհուն ու զգաստ հայացքով նայելով երևույթներին, կարողանում է հասկանալ ուժերի փոխհարաբերությունը, խորապես զգում է հայրենիքի զորությունն ու անսպառ հնարավորությունները։ Այդպիսի լուրջ խորհրդածություններով Շիրազը հանդես է հայրենիքի անպարտելիության գաղափարին։ Դա կանխորոշել է նրա ոտանավորների ներքին էությունը, կիրքը, կառուցվածքը։ Պատկերավոր արտահայտությունների սիստեմն ինքը ներթափանցված է անպարտելիության ու հաղթանակի հոգեբանությամբ։ Վերհիշենք, օրինակ, 1941 թ. գրած «Էքսպրոմտ» բանաստեղծությունը.

Մենք խառատ էինք մեր լեռների պես,
Դում հողմերի պես խուժեցիք վայրագ։

Մենք ձեր դեմ եկանք մեր լեռների պես,
Դում հողմերի պես ոռնացիք վայրագ։

Մենք հավերժ ենք, կամ մեր լեռների պես
Դում հողմերի պես կկորչեք վայրագ։

Անսասան, աներեր, անկոտրում հավատ. ահա այս հիանալի ոտանավորի գաղափարական պաթոսը։ Այդ մտայնությունն է իշխում հայրենասիրության թեման շոշափող բոլոր գրվածքներում։ Հայրենասիրության գաղափարը հայրենական պատերազմի տարիներին Շիրազի ստեղծած պոեզիայի առաջատար մոտիվներից է։ Նրա բանաստեղծություններում հայրենիքը հանդես է գալիս իբրև «անմահության ու խոյանքի աղբյուր», հայրենի զենքը դիտվում է իբրև հերոսական գործերի վկա։ Հայրենիքը ժողովրդին հերոսության ոգի է տալիս, զորքին խիզախությամբ է համակում, հաղթանակի հավատ ներշնչում։ Հայրենիքի սերը Շիրազի բանաստեղծություններում հնչում է անկեղծ ու անմիջական, դիտվում է ոչ թե ինչ-որ արտաքին պարտականություն, այլ հանդես է գալիս իբրև մի հարազատ, մերքնարուխ զգացմունք, որը որոշում է քնարական հերոսի հոգեկան ու բարոյական աշխարհը, պայմանավորում նրա վարքագիծը։ Այդ ձևով հայրենի աշխարհը ակտիվ տարր է դառնում ոտանավորի մեջ, քնարական հերոսը խոսեցնում է նրան, հայրենի բնությունը շնչավորվում է, ունկնդրում նրա ձայնին, մասնակցում նրա խոհերի ու զգացմունքների զեղումներին։

Գեղարվեստական գրականության կարևոր խնդիրներից մեկը գրական հերոսի իդեալն է։ Գրական ամեն մի ուղղություն ունեցել է իր հասարակական, քաղաքական, բարոյական իդեալները և այդ իդեալները կրող գրական հերոսը։ Սոցիալիստական ռեալիզմի գրականությունն ունի իր գաղափարական դավանանքն ու իդեալները, իր պատկերացումները գրական հերոսի մասին։ Շիրազին բավականին զբաղեցրել է գրական հերոսի պրոբլեմը։ Նրա այդ շրջանի պոեզիայում զգալի տեղ են գրավում հումանիստական բովանդակությամբ բանաստեղծությունները, որոնցում գեղարվեստական խտացված պատ-

կերպերով արտահայտված են մեր նոր բարոյականության մի քանի տիպական գծերը։ Նրա քնարական հերոսը բազմազան կողմերով է հանդես գալիս։ Հեղինակն արտացոլում է նրա ոչ միայն հայրենասիրական գծերը, այլև ցույց է տալիս բարոյական և հոգեկան հարստությունը։ Մարդկային անհատի մեջ հեղինակը գնահատում է բարի և առարինի գործերը, այնպիսի գործունեությունը, որը բարիք է ստեղծում, հիշելի հետք թողնում կյանքում։ Դա հասարակ օգուտի մտայնություն չէ։ Բարու, գեղեցիկի, բարձրի հատկությունները Շիրազի պոեզիայում բազմակողմանի են լուսաբանվում և խոր իմաստ ունեն։ Բանաստեղծի քնարական հերոսի հումանիստական ձգտումների շրջանակները շատ լայն են. նա չի մտածում անձնական բարօրության մասին, անսիրտ եսամոլ չէ, նա մտածում է աշխարհը գեղեցկացնելու, մարդկանց երջանկացնելու մասին, ընդհանուրի երջանկության մեջ է որոնում իր սեփական երջանկությունը։ Դա անհատականի և համամարդկայինի այն ներդաշնակությունն է, որը միշտ երազել են անցյալի մեր հումանիստները։ Այո, Շիրազն ուզում է ամբողջ աշխարհը երջանկացած տեսնել, փափագում է, որ գեղեցիկի հաղթանակը աշխարհով մեկ լինի, սրտանց ուզում է բարիքներ շաղ տալ հանուր մարդկության համար։ Նա անկեղծորեն բացականչում է.

Մի բան է տենչում սիրտս անամոք՝
Լինել մի վայրկյան
Լինեմ ծիածան՝
Որ ծայրե ի ծայր աշխարհը գրկեմ,
Որ գեղեցկությամբ աշխարհը լցնեմ՝
Լինել մի՛ վայրկյան,
Լինել մի՛ վայրկյան:

Հենց այդպիսի ձգտումների մեջ է Շիրազը տեսնում մարդկային անհատի ներքին հարստությունը։ Այդ, ինչ խոսք, հումանիստական մտայնության այնպիսի ցայտուն արտահայտություն է, որը բնորոշում է Շիրազի քնարական հերոսի բարոյական կերպարը։ Այդ մտայնությունը երբեմն այնպիսի նուրբ ձևեր է ընդունում, որ Շիրազի քնարական հերոսը խոր կսկիծ է զգում ամեն մի անմեղ կենդանի էակի կյանքի թելը կտրելու համար, դաշտի կանաչը տրորելն անգամ կարեկցության զգացմունք է առաջացնում։ Մի ոտանավորում մանկալը խոր կսկիծ է զգում, որ խոփի տակ է ընկել ու տրորել կանաչ մանուշակը։ Եթե նկատի ունենանք պատերազմի ժամանակի ծայր աստիճանի լարված իրադրությունը, այդ գրվածքներն առաջին հայացքից կարող են կրավորական թվալ, որ, իհարկե, ճիշտ չէ։ Բոլորովին ընդհակառակը, եթե վերհիշենք այդ գրվածքների առաջացման պատմական կոնկրետ ժամանակաշրջանը, դժվար չէ պատկերացնել դրանց նշանակությունը։ Հեղինակը դրանցով շատ գործուն մասնակցում էր ժամանակի գաղափարախոսական պայքարին, մի պայքար, որը տեղի էր ունենում լայն ասպարեզում։ Այդ ոտանավորները գրվել են հայրենական պատերազմի ծանր տարիներին։ Պատմական այդ ժամանակաշրջանը բնորոշ էր ոչ միայն այն բանով, որ երկու թշնամական բանակներ մահու և կենաց կռիվ էին մղում, իրար դեմ էին ելել հասարակական, տնտեսական երկու հակամարտ սիստեմ, այլև նրանով, որ շատ սուր կերպով իրար էին բախվել երկու թշնամական աշխարհայեցողություն, գաղափարական երկու հակադիր դավանանք։ Անավոր պայքար էր տեղի ունենում ոչ միայն կռվի դաշտում, այլև գաղափարների աշխարհում։ Շիրազի պատերազմական շրջանի բանաս-

ունեցությունները ժամանակի գաղափարախոսական կատաղի պայքարի գեղարվեստական արձագանքն են։ Ֆաշիստների ռասայական բացառիկության, սեփական ցեղի գերազանցության ռեակցիոն գաղափարախոսությանը սովետահայ բանաստեղծը պատասխանում է հումանիստական բարոյականության փառաբանությամբ։ Ահա որն է այդ երգերի նշանակությունը։ Մինչդեռ թշնամին ռասայական ատելություն էր քարոզում այլազգի մարդկության դեմ, վայրենի կրքեր էր բորբոքում, իրականում մահ ու սովեր էր սփռում իր շուրջը,— Շիրազի քնարական հերոսը բարիք է ցանկանում աշխարհին, խաղաղություն, երջանկություն ու համերաշխ կյանք է փափագում բոլորի համար, ծիածան է ուզում լինել, որ ամբողջ աշխարհը լցնի բարությամբ ու գեղեցկությամբ։ Այդքան բարձր տեսակետից է Շիրազը մոտեցել նշված թեմային։

«Երգերի գիրք» և մանավանդ «Լիրիկա» ժողովածուներում բավականին մեծ տեղ են գրավում սիրո, մոր, մանկության, մասամբ նաև բնության նվիրված բանաստեղծությունները։ Շիրազի անհատական կյանքը շոշափող ոտանավորներն օժտված են ներքին հարստությամբ։ Վերցնենք մանկությանը նվիրված երգերը։ Մանկությունը, մանկական պարզությունը, միամտությունը, բնական, անաղարտ անմիջականությունը, ինքնին վերցրած, միշտ էսթետիկական գայթակղիչ նյութ են ծառայել պոեզիայի համար։ Շիրազի բանաստեղծություններից շատերում մանկության տարիների քաղցր կողմերը չեն վերարտադրվում, այլ դառնությունններն ու կսկիծը։ Նա վերհիշում է մի մանկություն, որտեղ ոչ մի լուսավոր կետ չկա։ Սոված, տարօրիկ ու տկլոր, դռնեդուռ ընկած՝ հաց մուրալիս, որին ավելի շատ ծեծելով դուրս են վռնդում, քան ձեռքը մի բան դնում. այդպես է վերակենդանանում մանկությունը Շիրազի բանաստեղծություններում։ Ահա, օրինակ, «Վերհուշ» բանաստեղծությունը, որի մեջ հեղինակն ուզում է մանկությունը վերարտադրել իր անկրկնելի գրավչությամբ։ Բայց այդ չի հաջողվում, նա չի կարողանում խուսափել տխուր դեպքերից, դրանք գալիս, դառնացնում են քաղցր հուշերը։ Անմխիթար, անապահով, որբ մանկություն. սա այն մռայլ ներկն է, որով գունավորվում է մանկության թեման։ Տխուր մանկության դառնություններն ու կսկիծը հուզական ինչպիսի թափով, ռեալիստական ինչպիսի՜ ցայտունությամբ են մարմնավորված։ Ահա «Ջուր ծախողը», որը հեղինակի այդ շրջանի հիանալի գործերից է. ձեռքին բռնած կուժ մի պուճուր՝ ջուր կծախեր այն թուխ ու ժիր տղան։ Իսկ ի՞նչ.

Խմում էին ու՝ փող... չկա,
Գդակս էիս գլխիս ճաշում...

Բանաստեղծը տարբեր ոտանավորներում հաճախակի է հիշում ջուր ծախող պուճուր տղային, հիշատակում որբ մանկության փաստերը։ Բայց դրանցով չի ուզում տալ սոսկ աղքատ, անապաստան, որբ ու անտեր մանուկների կյանքը նախկինում, այլ արտացոլում է մարդկային անհատի անապահով վիճակը նախասովետական հայ իրականության մեջ։ Դա է որը մանկության թեման պարունակող գրվածքների բուն իմաստը։ Այս կոնցեպցիան իր ամբողջ խորությամբ ու բանաստեղծական ուժով մարմնավորված է «Մեր հին վանքի պատերի տակ» ոտանավորում, որը նույնպես հեղինակի բնարական լավագույն բանաստեղծություններից է.

Մեր հին վանքի պատերի տակ
Ճաշ եմ եփել որբ ու մենակ.

Մութ գիշերին դուրս մնացել,
Շատ եմ ցրտից, սովից լացել,
Բայց ո՛չ մի ձեռ, ո՛չ մի աստված
Վար չի գցել նշխար մի հաց.
Հե՜յ վախ, իրավ, թե աստված կար,
Ինչո՞ւ չէր տա գեթ մի նշխար՝
Որ ես սոված գիշերն ի բուն,
Լալիս էի որբ ու անտուն,
Ընկած անտեր, մերկ ու մենակ,
Հին վանքերի պատերի տակ..

Մարդկային անհատի անապահով դրության, առանց հեռանկարի ու վաղվա լավ օրվա երաշխիքի,—սա այն տիպական երևույթներից է, որն այնքան բնորոշ է տվյալ շրջանի հայ իրականության համար։ Մանկության թեման, այդ ձևով ընդհանրացվելով, հասարակական լայն իմաստ է ստացել։ Այդ թեման բանաստեղծը հետագայում մեծ կտավի վրա մշակել է «Իմ ընկեր Լորիկը» պոեմում։

Պատերազմի տարիներին անհամեմատ կատարելագործվեց Շիրազի բանաստեղծական վարպետությունը: «Բանաստեղծի ձայն»-ում արդեն տեղ-տեղ պոետական փայլուն կայծեր են նկատվում, իսկ «Սրտերի գիրք»-ը և «Լիրիկա»-ն նշանավորում են բանաստեղծական մի նոր, բարձր փուլ։ Այդտեղ զետեղված բանաստեղծությունների մեծ մասը մտել է հեղինակի մնայուն գործերի գանձարանը և սովետահայ պոեզիայի նվաճումներից է։

* *

Հովհաննես Շիրազի ստեղծագործական էվոլյուցիայից երևում է, որ քնարական երգի ժանրային նեղ շրջանակները հաճախ չեն բավարարել մեծ հղացումների իրականացմանը։ Բնական է, որ պետք է բանաստեղծական մեծ կտավի ժանրերին հաճախակի դիմելու պահանջ զգացվեր։ Արդարև, նա երբեք ձեռքից բաց չի թողել պոեմի ժանրը. այստեղ ևս ուժեղ թափով արտահայտվել է նրա բանաստեղծական տաղանդը։ Դրա ապացույցն արդեն տեսանք «Սիամանթո և Խջեզարե»-ում։

Շիրազի լավագույն պոեմները՝ ինքնատիպ արվեստով և արժարժած պրոբլեմներով՝ ուրույն տեղ են գրավում արդի հայ պոեզիայում։ Այդ ժանրի լավագույն գործերը կերտվել են հետպատերազմյան տարիներին։ Որոշ շրջանում նրա գրիչն այդ մարզում ավելի արգասավոր է եղել, քան մյուս ժանրերում։ Շիրազի հետպատերազմյան շրջանի լավագույն պոեմներն են՝ «Բիբլիական», «Հրաղդան», «Իմ ընկեր Լորիկը», «Մեր գյուղերի անունները», «Մարդկանց անունները»։

Բանաստեղծական մեծածավալ ժանրի գրվածքների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում «Բիբլիական»-ը։ Դա հեղինակի ուժեղ գրվածքներից է, որում գեղարվեստական հզոր թափն ու խիզախ ընդհանրացումները համապատասխանում են գաղափարական խորությանը։

Շիրազի պոեզիայում բավականին տեղ են գրավում խոհական բանաստեղծությունները, որոնց մեջ կյանքի սերն է երգվում, հերքվում է ունայնության հոգին, հին փիլիսոփայությունը և հաստատվում տարերքը հաղթահարելու, բնությունն ու կյանքը մարդկայնացնելու կենսահաստատ մտայնությունը։ Շի-

բազի խոհական երկերի պսակը հանդիսանում է «Բիբլիական»-ը, որտեղ պրոբլեմը լայն կտավի վրա է դրված, ավելի է խորացված, արտահայտված է առավել թանձր ընդհանրացումներով։

Սովետական գրականության կարևոր թեմաներից մեկը նոր գիտակցության, մարդկային նոր հոգեբանության ու բարոյականության ծնունդ է, ճշմարտացի պատկերումը հասարակական այն խոշոր պրոցեսի, թե ինչպես մարդիկ վերափոխելով բնությունը՝ վերափոխում են իրենց սեփական բնությունը։ Այդ գործունեության ընթացքում քանի գնում՝ այնքան ավելի է կոփվում մարդու բանականությունը, բազմապատկվում է սեփական ուժերի հզորության գիտակցումը, դերազանցությունը շրջապատի ընդդիմադիր ուժերի հանդեպ։ Այդ պրոցեսում լայն հորիզոններ են բացվում մարդկային գիտակցության համար, բանականության ամեն մի նոր հաղթանակ բեղմնավորում է նրա ստեղծարար աշխատանքային գործունեությունը, իսկ, մյուս կողմից, այդ վերջինն իր հերթին հարստացնում ու հզորացնում է մարդու գիտակցությունը։ Դա նոր հոգեբանության ձևավորման ուժեղ ազդակներից է։ Մենք ականատես ենք, ասում է Գորկին, թե ինչպես ակտիվ, կազմակերպվող բանականության առավել ինտենսիվ և հաջող պայքարը հաղթանակ է տանում «բնության մեխանիկական քանակության դեմ», «այդ պայքարում ստեղծվում է իրոք նոր մարդը»։ Մեր գրողների թերություններից մեկը Գորկին համարում էր այն, որ ցույց չեն տալիս բանականության և հավատի պայքարը, չեն պատկերում, թե ինչպես վերանում է աստծուց օգնություն սպասելու հույսը և չքացող պատրանքների տեղ մարդու մեջ այն գիտակցությունն է առաջանում, որ ինքը անկախ է՝ «անհայտ, անհասկանալի, ամենազոր ուժից», մարդն ինքն իրե՛ն է զգում իբրև ամենազոր և ամենաստեղծ ուժ։ Մարդու պայքարը բնության դեմ, բնության գաղտնիքներին տիրանալու տենչը Գորկին համարում է համամարդկային թեմա։

Այս դիտողություններն օգնում են ճիշտ բացատրելու «Բիբլիական»-ի բուն պրոբլեմը՝ մարդու բանականության ողնշնչված դովը, մարդկային ուժի, անպարտելիության, ստեղծագործական անսահման կարողությունների փառաբանումը։ Եթե այստեղ կոնֆլիկտ կա,—իսկ դա անպայման կա,—ապա դա, Գորկու բառերով ասած, ակտիվ, կազմակերպող բանականության և, մյուս կողմից, «բնության մեխանիկական քանակության» միջև եղած պայքարն է, պայքարը բիբլիական հավատի և առողջ բանականության միջև։ Այդ կերպ պոեմում ցույց է տրված մարդու հաղթանակը բնության կույր ուժերի և խոլական տարերքի դեմ, մարդկային ուժի պատմական հաղթարշավ ընթացքը։

«Իմ ընկեր Լորիկը» պոեմում, ժյաս վերարտադրված պատմական ֆոնի վրա, ստրված է որբանոցի սան փոքրիկ Լորիկի տխուր պատմությունը, այն հազարավոր որբերից մեկի, որի ընտանիքը տեղահան են արել, զրկել տնից ու հողից, ծնողներին սրի քաշել դաղթի ճամփեքին։ Բնական է, որ այդպիսի թեման մոայլ երանգներով պետք է դունավորվեր։ Փոքրիկ Լորիկի անձնական ճակատագրի մեջ նա խտացրել է շատ ու շատ որբերի կյանքը, որոնք նույն դառնություններն են կրել։

Շիրակի ետպատերազմյան շրջանի պոեմներում արտացոլվել են նաև վերածնվող Հայաստանը, մեր հանրապետությունում տեղի ունեցող պատմական խոշոր վերափոխությունները։ Այդ թեմային են նվիրված «Հրազդան»-ը, «Մեր գյուղերի անունները» և «Մարդկանց անունները» գրվածքները։ Մեր գյուղերի

ու մարդկանց հին անունների ծաղրը, նոր անունների գովքը վերջին երկու գրվածքներում առիթ են ծառայեցվում գեղարվեստական ընդհանրացումների համար։ Հեղինակը շուտ-շուտ անունների հարցը մի կողմ է թողնում և ցույց տալիս, թե ինչպես հնի տխուր բեռը վաղուց թոթափված է, ինչպես մեր գյուղերում նոր կյանքն է եռում, մեր մարդկանց այլ հարցեր են հուզում, նոր կենցաղով, նոր կուլտուրայով ու բարոյականությամբ են ապրում նրանք։ Այդ շեղումների ժամանակ բանաստեղծը դիմում է հինն ու նորը իրար հակադրելու եղանակին, որը յուրովի է կիրառված, հնչում է ինքնատիպ ու նոր ձևով։

* *

Շիրազի պոետական գործունեության վերջին շրջանը նշանավորված է «Հատընտիր» (1954), «Բանաստեղծություններ» (1954) և «Քնար Հայաստանի» (1958) ժողովածուներով։ Նոր, թարմ մոտիվներ, հասարակական, բարոյական, խոհական նշանակալից պրոբլեմներ, գեղարվեստական խտացած ընդհանրացումներ, հուզական համակող պոռթկումներ,—ահա այս շրջանի բանաստեղծությունների մեծ մասի աչքի ընկնող գծերը։

Այդ ոտանավորներում Շիրազին, նախ և առաջ, զբաղեցնում է պոետի և դարաշրջանի, պոեզիայի և իրականության փոխհարաբերության հարցը։ Նա գիտե, որ բանաստեղծը պետք է լինի ժամանակի ոգու արտահայտիչը, բայց միաժամանակ հասկանում է, որ հայցենի ձևոք բերած մտքերով չի կարելի կատարել կյանքի պահանջը։ Նա ճիշտ է կողմնորոշվում. աշխարհից եկած տպավորությունները ու պատկերացումները դեռևս հում, տձև նյութ են, դրանք պետք է մարսել, յուրացնել, իմաստավորել։ Իսկական գեղեցիկը թվացյալի մեջ չէ, երևույթների մակերևույթի վրա չի գտնվում, այլ թաքնված է դժվար որսալի, հաճախ աննկատելի խորքերում։ Նույն հայացք է պետք՝ ընդգրկելու իրականության բազմազանությունը, վառ երևակայություն՝ թափանցելու պրոցեսների խորքերը և վերլուծող միտք՝ որոշելու տեղի ունեցող երևույթների իսկական արժեքն ու նշանակությունը։ Ահա լուսինը երկնքի բարձրությունից իր լրիվ դեմքը հառել է ծովի վրա, ասում է բանաստեղծը, մարգարիտներ է որոնում, բայց իսկական հարստությունը խորքերում է լինում, այնտեղ պետք է որոնել.

—Չես գտնի ոչինչ ջրերի վրա,
Ծնկած և աչքերն առնել ափին,
Չես գտնի ոչ մի գանձերը նրա՝
Մինչև չսուզվես հատակը ծովի։

Շիրազը շոշափում է նաև պոետական բովանդակության հարցը։ Նա ճիշտ չի համարում, երբ փառաբանում են իրերն ու դեպքերը, մոռանալով, որ պոեզիայի իսկական առարկան մարդն է, նրա սիրտն ու հոգին։ Շիրազը երգում է մարդուն, նրա ուրախություններն ու տրտմությունները։ Ով իսկական արժեքները որոնում է խորհող և ապրող մարդու մեջ, նրա պոեզիայի վրա ժանգ չի նստի։ Չարենցից եկող պոետական այս առողջ զգացողությունը Շիրազի մի ոտանավորում արտահայտված է հետևյալ կերպ. դուք քնքշությունը թաքցնում եք դողով, ես սիրուց տանջվածի վիշտն եմ երգում, դուք շեփորում եք տրակտորը դեռ, իսկ ես տրակտորիստի սրտին եմ նայում, «ձեր երգը պողպատ, իմը՝ սիրտ ու սեր,—և մի՞թե սրտին ժանգը կնստի»։ Շիրազը ճիշտ է մտածում.

մեծ պոեզիայի համար մեծ բովանդակություն է պետք, իսկ մեծ բովանդակությունն ստացվում է մարդու և բնության միասնությունից, մարդկային անհատի հոգեկան, բարոյական աշխարհի, նրա գործերի ու զգացմունքների համադրական արտացոլումից։ Այդ միտքը ցայտուն կերպով մարմնավորված է նկարիչներին հասցեագրված հետևյալ ոտանավորում.

Թեկուզ բնության գույներ բոլոր
Հրաշքով առնես քո ծով կտավին,
Նորից չես հասնի բնության խոր,
Քո ծով կտավով փոքր ես տակավին:
Բայց երբ վրձնես այդ գույների հետ
Եվ մարդու հոգու գույներ բոլոր,
Կագրես քո մի բուռ կտավով հավետ՝
Մարդու պես վսեմ, բնության պես խոր:

Այսպես ուրեմն, իսկական պոետական բովանդակություն, պարզություն, գույների ու ձևերի ճոխություն,—ահա Շիրազի պոետական դավանանքը։ Բանաստեղծը սառը արձանագրություններով չի զբաղվում, այլ գեղարվեստական խոր ընդհանրացումներ է կատարում, ամեն մի առանձին, մասնակի երևույթի միջոցով մեծ բովանդակություն է արտահայտում։

Շիրազի ռեալիստական արվեստը մի առանձին փայլ է ստացել առակներում։ Դա նոր ժանր է նրա պոեզիայում։ Շիրազն ընթացել է հայ դասական ռեալիստական առակի ճանապարհով։ Նա, իհարկե, պահպանում է առակի ժանրին հատուկ գծերը՝ այլաբանությունը, կենդանիներին, բնության այլևայլ երևույթներին խոսեցնելը և այլն։ Սակայն այս կամ այն մտահղացումը մարմնավորելու համար հաճախ նա այնպիսի ձև է գտնում, որ հենց պատկերային հյուսվածքի մեջ ինքնին երևա տվյալ գաղափարը, և ոչ թե անպայման հատուկ մատնացույց արվի վերջում, ինչպես այդ սովորաբար ընդունված է առակի ժանրում։ Այդպիսով, այլաբանական տարրը հասցվել է նվազագույն չափի, որի փոխարեն ավելացել է ռեալիստական ընդհանրացման տեսակարար կշիռը, առակը դարձել է առավել սեղմ ու արտահայտիչ։ Շիրազի առակներում շոշափվում են մեծ մասամբ բարոյական, էթիկական հարցեր, դատապարտվում են գոռոզամտությունը, պորտաբուծությունը, անհատապաշտական բարոյականության երևույթները. և, մյուս կողմից, գովաբանվում է համեստությունը, աշխատասիրությունը, բարեբեր և առաքինի գործը։

Շիրազի վերջին ժողովածուներում ևս, ինչպես նախորդ գրվածքներում, հայրենիքի և ժողովրդի թեմաները առաջնակարգ տեղ են գրավում։ Այդ ամենևին պատահական չէ։ Հայրենասիրական զգացմունքը Շիրազի պոետական խառնվածքի, հոգեկան աշխարհի այնպիսի մի օրգանական գիծն է, որ առանց դրա, թվում է, մի ամբողջ տարածություն դատարկ կմնա նրա պոեզիայում։ Հայրենիքի կարոտն ամբողջապես համակել է Շիրազի քնարական հերոսին, որն իրեն անբաժանելի է համարում հայրենի երկրի բնությունից, հայրենի աշխարհից։ Հայրենիքի պատմության անջնջելի հուշերը, հայրենի օջախի, ոստանների, լեռների, ջրերի կարոտը միշտ ուղեկցում են նրան, միշտ նրա հետ են, ուր էլ որ լինի։

Իր գրչակիցների նման, Շիրազը ևս երգում է իր ժողովրդի ազատատենչ, անընկճելի ոգին, նրա կենաց և մահու պայքարը ազգային գոյության համար, մշտատև, անհավասար, անողոք պայքարը, որի շնորհիվ նա կարողացել է գի-

մաղրել ահեղ փորձություններին, պահպանել իր ազգային ինքնությունը և անցնելով դարերի փոթորիկների միջով՝ եկել ու այսօր մասնակցում է սովետական ժողովուրդների պատմական երթին։

Շիրազի քնարական հերոսն ապրում է մարդկայնորեն զեղեցիկ, ընդհանուր, լայն շահերով։ Նրա պոեզիայի իշխող ոգին հումանիզմն է։ Այս վերջին ժողվածուներում ևս բավականին տեղ է գրավում բարու, զեղեցկի, բարձրի գովքը։ Այդ քնարական հերոսը պատրաստ է սրտաբաց իր գիրկն առնել ամբողջ մարդկությունը, անկեղծորեն ցանկանում է, որ ոչ մեկի աչքից արցունք չթափվի, ոչ մեկի սրտից արյուն չկաթի։ Հումանիստ բանաստեղծն իրեն բարոյապես շատ բարձր, հոգեպես շատ ուժեղ, խիզճը շատ հանգիստ է զգում, որ ոչ ոքի չի զրկել հացից, ոչ ոքի տունը չի ավերել, ոչ ոքի չի զրկել օջախից ու հայրենիքից։ Ընդհակառակը, խորապես վշտանում է հեռավոր կորեացու թափած արցունքի համար, ատելությամբ է խոսում մարդկության խաղաղությունը պղտորող, ժողովուրդների միջև ատելություն սերմանող, մութ ուժերի մասին, վշտանում է այն բոլոր մոտ ու հեռու մարդկանց համար, որոնց ձեռքից խլում են արդար վաստակը, խաղաղ կյանքը հանում շավիղից։ Համերաշխություն՝ ազգերի, ժողովուրդների միջև, խաղաղություն, աղատ, արդար, իրավահավասար կյանք. սրանք են Շիրազի մարդասիրական երազանքները, որոնք զանազան ձևերով մարմնավորվել են նրա գրվածքներում։

Շիրազի հայրենասիրական երկերում ևս, ինչպես նրա մյուս գրվածքներում, հանդիպում է միևնույն մեծ սիրտը, որն ուրախանում է և՛ իր երկրի վերելքով, առաջադիմությամբ, և՛ ժողովուրդների երջանկությամբ, հավասարապես ապրում է և՛ հարազատ հայրենիքի բախտով, և՛ ուրիշ ազգերի ճակատագրերով։ Տեսնելով հայրենի երկրի փթթումը, իր ժողովրդի հաղթական երթը եղբայրական ժողովուրդների ընտանիքում, բանաստեղծի սիրտը լցվում է հպարտության օրինական զգացմունքով։

* * *

Շիրազի պոեզիայի վերջին շրջանը ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նրա ստեղծագործական զարգացումն ընթացել է ոչ այնքան նոր թեմաներ հայտնագործելու, որքան հին, նախորդ շրջանի գրվածքներից ծանոթ թեմաների խորացման ուղղությամբ։ Անդրադառնալով ծանոթ թեմաներին, նա կարողանում է նոր իմաստներ որսալ, նոր երանգներ հաղորդել ու նոր եղանակով մարմնավորել դրանք։ Այդպիսով ծանոթ մոտիվները նորանում են, նոր հնչեղություն են ստանում, ուրեմն և ավելի խորացվում ու բազմազան երանգներ ձեռք բերում։ Թեմաների խորացում, մոտիվների բազմազանություն, բազմերանգ դրսևորումներ ու բազմակողմանի լուսաբանում — ահա Շիրազի վերջին շրջանի պոեզիայի բնորոշ գիծը։ Վերցնենք, օրինակ, բնությանը, սիրո թեմային նվիրված բանաստեղծությունները, խոհական մտորումները։

Բնությունը Շիրազի նախորդ շրջանի գրվածքներում հանդես է գալիս մեծ մասամբ կա՛մ իբրև էսթետիկական հայեցողության առարկա, որից հեղինակը հյուսում է պես-պես պատկերներ, կա՛մ դիտվում է որպես նյութական բարիքների աղբյուր։ Նույնպիսի մոտեցում երբեմն հանդիպում է նաև վերջին ժողովածուներում։ Բայց հիմա այդ չէ գլխավորը։ Այժմ բնությունը դերազանցապես

հանդես է գալիս որպես հավատարիմ դրուցընկեր, որին բանաստեղծը բացում է իր հոգում թաքնված շատ նվիրական գաղտնիքներ։ Բանաստեղծը նրան դիմում է որպես մի մտերիմի, որը սրտացավ ունկնդրում է իրեն, մասնակցում է իր մտորումներին։ Այսպիսով, բնությունը հիմա կրավորական պատկեր չէ, այլ գործուն տարր, որն ակտիվորեն մասնակցում է պոետական ընդհանրացումներին, խոհերի ու զգացմունքների դրսևորմանը հանդես է գալիս որպես պատկերային հյուսվածքի ու կոմպոզիցիոն շաղախի անբաժանելի տարր, որպես ռիթմական շարժմանը մասնակցող կարևոր երևույթ։

Բնանկարի այսպիսի գործուն մասնակցության ձևերից մեկը բնության շնչավորումն է։ Բանաստեղծը խոսեցնում է բնությանը և ինքն էլ խոսում նրա հետ, բնությունը դիտում է որպես սիրո, խլրտացող կյանքի, հուզմունքի, երազանքի առարկայացված մի աշխարհ, որին պետք է վերաբերվել զորովանքով, զգուշությամբ, ակնածանքով, սիրով.

Տեսնես՝ ազո՞ւմ են ծաղիկները,
Տեսնես՝ սիրո՞ւմ են ծաղիկները,
Տեսնես՝ երգո՞ւմ են ծաղիկները։

—Ինչպե՞ս չեն զգում,
Ո՞նց չեն սգում,
Երբ որ մեռնում են ծաղիկները։

Սա ոչ այլ բան է, քան եթե բնապաշտության հայեցողության ցայտուն դրսևորում։ Այս յուրահատուկ պանթեիզմը երկու իմաստ ունի։ Նախ՝ ծառայեցվում է իրրև մարդկային անհատի ներաշխարհի դրսևորման ձև, արտահայտչական եղանակ։ Այս իմաստով բնության երևույթները դառնում են քնարական հերոսի ապրումների թարգմանը, նրա ներաշխարհի հայելին։ Երկրորդ, լայն, փիլիսոփայական առումով՝ բանաստեղծը միասնություն է որոնում մարդու և բնության միջև։ Այս երկրորդ իմաստով բնությունը ծառայում է որպես ատաղձ մարդկային անհատի հոգեկան աշխարհի սինթետիկ պատկերը տալու, քնարական հերոսի հույզերը, երազանքները, մտորումները, բարոյական հատկությունները ավելի լայն չափերով արտացոլելու համար։

Մարդու և բնության միասնության միևնույն կոնցեպցիան հանդիպում է նաև Շիրազի վերջին շրջանի խոհական երգերում, որոնք առհասարակ մեծ տեղ են գրավում նրա պոեզիայում։ «Երգ Հայաստանի»-ից հետո նա շարունակ անդրադարձել է բանաստեղծական խոհին և տվել մի շարք աչքի ընկնող գործեր, որոնց մասին արդեն խոսվեց վերը։ Վերջին շրջանի խոհական բանաստեղծությունները ավելի են կատարելագործվել, նրանց բովանդակությունն ավելի է խորացել։ Մյուս կողմից, ընդարձակվել են կենսական ընդգրկման շրջանակները։ Ինչպես առակներում ու այլ ոտանավորներում, այնպես էլ խոհական երգերում հեղինակը երևութականը խարուսիկ է համարում, մարդկային անհատի հարստությունը նրա բարի գործերի, կյանքում թողած հետքի մեջ է որոնում, առաքինության ու հումանիզմի մեջ։ Բանաստեղծը նաև խորհրդածություններ է անում կյանքի, փառքի, մահվան մասին։ Կյանքը պետք է սիրել, կյանքի արժեքը պետք է իմանալ, յուրաքանչյուր օրը իմաստալից պետք է անցկացնել, կգա մի պահ, շատ կփոշմանես անիմաստ շռայլած օրերիդ համար,—այսպիսի խոհերով են իմաստավորված այդ բանաստեղծությունները։

Շիրազի խոհական գրվածքների գլխավոր պրոբլեմը՝ մարդու ուժն ու հզորությունը, նոր երգերում իմաստավորվում են նոր ձևով։ Այդտեղ ցույց է տրվում մարդկային կարողությունների մի նոր ոլորտ, ուժի ու հզորության մի լրացուցիչ աղբյուր. դա մարդու և բնության միասնությունն է, բայց այնպիսի միասնություն, որտեղ մարդկային անհատականությունը չի անհետանում, չի տարրալուծվում, այլ, ընդհակառակը, ավելի է մեծանում նրա կշիռն ու կոչումը։

Մարդու և բնության միասնություն ասելով հասկացվում է բնությունը՝ զումարած մարդու ստեղծումները, մարդու աշխատանքային, մտավոր, հոգևոր գործունեությամբ ձևափոխված, հարստացած ու իմաստավորված իրականությունը։ Հենց այդ միասնության մեջ են մարդու ուժն ու հրաշագործ կարողությունները։ Մարդու և բնության միասնության պրոբլեմը բանաստեղծական վառ պատկերով արտահայտված է, օրինակ, այս ոտանավորում.

Բնության առջև, նրա սրտում
Ես կամ, շնչում եմ, իշխում նրան.
Սիրտս մեկ ուրսի ու մեկ տրտում՝
Ասես պատկերն եմ ես բնության.
Նայում եմ նրան, նայում եմ ինձ.—
Ասես թե ե՛ս եմ հյուսել նրան.
Ասես թե նա է իր շիրերից
Հյուսել հոգու ծովն իմ անսահման։
Ո՜, նա՛ է, նա է ստեղծել ինձ.
Որ իմ մեջ տեսնի ինքը իրեն.
Ինչպես որ ես եմ իր հյուլեում
Տեսնում էությունն իմ անսահման...

Մարդը բնության մի հյուլեն է, բայց ոչ անգործուն, անօգնական, կրավորական էակ։ Մարդը բնության ծնունդ և միաժամանակ՝ բնության ստեղծագործ ուժ. այդ փոխադարձ ազդեցության, փոփոխման ու փոխադարձաբար իրար հարստացման մեջ է կայանում մարդու և բնության միասնության իմաստը, որն այնքան ինքնատիպ ձևով երգում է Շիրազը, այդ եղանակով բացահայտելով քնարական հերոսի նոր կողմեր։ Այդ, անշուշտ, նոր երանգ է բանաստեղծի խոհական երգերում։

Պոետական միևնույն ակունքից բխող ուժեղ պոռթկումներ հանդիպում են նաև բանաստեղծի վերջին ժողովածուների սիրային երգերում։ Դրանք ընթերցողի առաջ բացում են ալեկոծումներով լի մի խռովահույզ աշխարհ, որտեղ խնդությանը հաջորդում է թախիծը, երգականներին՝ հիասթափությունը, քաղցրը հուշերին՝ զզջանքն ու բողոքը։ Դրանց մի մասում գեղարվեստական տպավորիչ խոսքով մարմնավորված են հոգեկան որոշ սուր պահեր. կարոտ, կսկիծ, քաղցր հուշ, հիասթափություն։ Առաջատար գիծը հավատարիմ, անդավաճան, ամուր սիրո գովքն է։ Ոչխողը դարձյալ չգոհացած, չիրականացված սերն է։

Շիրազը հավատարիմ է իր պոետական բնավորությանը. «Գարնանամուտ»-ից ու «Երդ Հայաստանի»-ից սկսած մինչև վերջին ժողովածուն համառ հետևողությամբ սիրո թեման միշտ մնում է նրա ուշադրության կենտրոնում. բնական ճանապարհով գալիս է բանաստեղծի հոգեկան աշխարհից, նրա բանաստեղծական մտածողության անբաժան մասն է։

Շիրազի վերջին ժողովածուների սիրային երգերում հաճախ հանդիպում են մռայլ գույներ։ Վշտոտ բողոք, տխուր հուշեր, չգոհացած, երբեմն խոցված

հողու կսկծալի մրմունջներ։ Պետք է ասել, որ այդ նոր տրամադրություն չէ Շիրազի պոեզիայում։ Նախորդ շրջանի սիրային երգերը ևս զգալի չափով երանգավորված են մռայլ գույներով։ Սակայն նախկին ոտանավորներում չգոհացված սիրո ներքին իմաստը մնում էր չբացահայտված։ Վերջին շրջանի սիրո երգերի նոր երանգն այն է, որ վերջապես բացահայտվում է տխուր տրամադրությունների խորքում թաքնված ներքին իմաստը։ Այժմ մենք տեսնում ենք, որ ուժեղ զգացմունքներով օժտված բնարական հերոսը ուժեղ սեր է ուզում, պահանջներն ու չափանիշները մեծ են, բայց իրականում չի գտել, չի գտնում այդպիսի մեծ սեր։ Հավատացած էր, որ կարոտած սերը պետք է տաներ դեպի բարձրերը, բայց այն զուրկ էր թև ու թռիչքից, խարուսիկ էր։ Հենց այստեղից էլ առաջանում են տխուր նվագները։ Բայց այդ ամենին թույլ հոգու հիվանդոտ տրամադրություն չէ, այլ հիասթափության բնական մի արտահայտություն։ Նա բերեք իմ երգները. ահա բանաստեղծի սիրային երգերի վերջին եզրակացությունը՝ իրական ուժեղ սեր չգտնելուց հետո։ Այսպիսով, Շիրազի սիրային երգերի հիմնական գիծն այն է, որ իրական սերը տեղի է տվել երազականին։ Եթե դրան մոտենանք նեղ առումով, ապա կարող ենք ասել, որ բանաստեղծն անհատական սնհաջող սերն է երգում։ Բայց լայն առումով մոտենալով, լայն ընդհանրացումներ կարելի է տեսնել։ Եվ, իսկապես, դրանցում զգացվում է երազականի և իրականի անհաշտություն, հեղինակի բնարական հերոսին հուզում է գեղեցիկը, մաքուրը, կատարյալը, որպես ընտանեկան, բարոյական և հասարակական կյանքի իսկական հիմք, որպես վարքի չափանիշ։ Այդպիսի հումանիստական բարձր կետից Շիրազի բնարական հերոսը վիճում է աններդաշնակություն առաջացնող երևույթների դեմ։

Բայց այդ ամենին չի թուլացնում իրականի զգացողությունը։ Շիրազը օժտված է առողջ բանականությամբ, ամուր կանգնած է իրական հողի վրա։ Եթե իրականում ցանկալին չգտավ և հաճախ սավառնում է դեպի երազական ոլորտները, այդ ամենին փախուստ չէ իրականությունից։ Այդ միայն մի բան է նշանակում. բանաստեղծը չի ուզում իջնել կայֆայված իդեալների բարձրությունից, այլ ուզում է իրականը հասցնել իդեալականի բարձրության, ավելի ճիշտ՝ ձգտում է հասնել երկու կողմերի ներդաշնակության։

Այսպիսով, Շիրազի վերջին շրջանի խոհական, բնության և սիրո գրվածքները դանդիսանում են գեղարվեստական հարուստ ընդհանրացումներ, որտեղ նախորդ շրջանից եկող ծանոթ թեմաները ստացել են նոր երանգներ և որոնք բացահայտում են բնարական հերոսի հոգեկան, բարոյական աշխարհի նոր, ուժեղ կողմերը։ Այդ իմաստով անձնական թեմաներ պարունակող գրվածքները ևս հանդիսանում են նոր, բարձր փուլ հեղինակի ստեղծագործական էվոլյուցիայի այս շրջանում։

ВЫДАЮЩИЙСЯ ПОЭТ

(К 50-летию со дня рождения Ов. Шираза)

С. А. СОГОМОНЯН

(Резюме)

Литературная деятельность талантливого современного армянского поэта Ованеса Шираза имеет более чем 30-летнюю историю. Уже первые его произведения — сборники «Весна» (1936), «Песнь Армении» (1940) и поэма «Сиаманто и Хджезаре» (1936) — показали, что поэт органически связан с жизнью и что источником его поэтических вдохновений является современность.

Тридцатые годы для него были годами поисков собственных тем, самобытных мотивов и работы над стилем. В годы Великой Отечественной войны начинается новый плодотворный период в творческой жизни поэта, период идейного роста, повышения художественного мастерства и тяги к глубоким обобщениям. Этот этап отмечен сборниками «Голос поэта» (1942), «Книга песен» (1942) и «Лирика» (1946). Ведущими темами были: судьба Родины и народа, прославление могучих советских вооруженных сил, вопросы войны и мира, душевный мир человека. Поэзия Шираза глубоко проникнута оптимистическим духом, гуманизмом, верой в победу нашего дела, в творческие силы советского человека. В произведениях этого периода, как и последующего — послевоенного,— мы находим также мотивы интимной окраски — «вечные» темы лирики непосредственных чувств: любовь, природа, воспоминания, детство, думы о жизни и смерти и т. д.

Ованес Шираз — поэт лирического склада. Вместе с тем он обладает ярко выраженным эпическим талантом. Его поэмы («Сиаманто и Хджезаре», «Библейская», «Мой друг Лорик», «Раздан», «Имена наших людей», «Имена наших сел») принадлежат к выдающимся произведениям этого жанра в современной армянской поэзии. В них затрагивается ряд кардинальных проблем: критика частнособственнической морали и социального неравенства («Сиаманто и Хджезаре»), прославление человека, его творческой силы, преобразующей природу («Библейская»), судьба молодого человека в эксплуататорском обществе («Мой друг Лорик»), формирование новых нравственных норм («Раздан», «Имена наших людей», «Имена наших сел») и т. д.

Послевоенные годы, в особенности последнее десятилетие, являются периодом расцвета творческих сил поэта. Им были опубликованы следующие новые сборники: «Книга мира и любви» (1951), «Избранные» (1954), «Стихотворения» (1954), «Лира Армении» (1958). Новые, свежие мотивы, проблемы общественного, этического, философского содержания, высокое искусство стиха, пластические образы, глубокие обобщения, эмоциональная насыщенность — таковы главные идейно-художественные черты поэзии Ов. Шираза этого периода. Поэт все чаще обращается к

патриотическим темам, снова возвращается к ранее воспетым мотивам— вопросам любви, природы, философского раздумья, которые теперь имеют новое звучание. Поэт создал также цикл ярких реалистических басен, которые отличаются глубиной содержания и стройной композицией. Патриотические, философские стихи и басни Шираза, а также лирические стихотворения поэта занимают свое достойное место в армянской советской поэзии последних лет.